Արձանագրություն N2

«ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-92/15» ծածկագրով կայանի կարիքների համար ավտոտրանսպորտային միջոցների գնման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մեծամոր 11 հունվարի 2016թ.
ժ.14:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարապետյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Համբարձումյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Մկրտչյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հակոբյանը
«Մեգամոթորս» ՍՊԸ ներկայացուցիչ Դ.Բունիաթյանը, «Ռուսկիյե Ավտոբուսի-Գրուպպա ԳԱԶ» ՍՊԸ ներկայացուցիչ Շ.Հովհաննիսյանը
Հանձնաժողովի անդամ Հ.Ավագյանը բացակայում էր նիստից

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-92/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սկսեց իր գործունեությունը:

1. «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-92/15» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացում

---

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 317.000.000 (երեք հարյուր տասնյոթ միլիոն) ՀՀ դրամ: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղար Ն.Հակոբյանը հայտարարեց, որ ընթացակարգին մասնակցելու հայտ են ներկայացրել 3 մասնակից՝

- **«Էյչ Գրուպ» ՍՊԸ - ք. Երևան, Բաշինջաղյան փող., տ.13, բն. 30, հեռ. 091-40-40-73**
- **«Մեգամոթորս» ՍՊԸ – Կոտայքի մարզ, գ.Առինջ, Երևան-Սևան մայրուղու աջակողմյան հատված, հեռ. 010-20-00-00**
- **«Ռուսկիյե Ավտոբուսի-Գրուպպա ԳԱԶ» ՍՊԸ – ՌԴ, Մոսկվայի մարզ, Օդինցովի շրջան, գ.Մալիյե Վյազեմի, տ. 1, հեռ. (83171) 3-57-43, 3-12-59:**

2. Ուսումնասիրելով գնային առաջարկների ծրարները, դրանցում գտնվող փաստաթղթերը (կցվում են)՝ **հանձնաժողովը եզրակացրեց, որ՝**

- «Էյչ Գրուպ» ՍՊԸ -ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերից՝ հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնությանը կից վճարման պահանջագիրը մասնակիցը ներկայացրել է հրավերով սահմանված վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի պահանջների խախտմամբ (մասնակցի կողմից լրացվել է ներկայացման ամսաթիվը դաշտը, որը պետք է լրացվեր շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը): Հանձնաժողովը **«Էյչ Գրուպ»** ՍՊ-ի ներկայացրած հայտը գնահատեց հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

- «Մեգամոթորս» ՍՊԸ -ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

- «Ռուսկիյե Ավտոբուսի-Գրուպպա ԳԱԶ» ՍՊԸ-ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

3. Ներկայացվեցին մասնակցների գնային առաջարկները.

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | «Մեգամոթորս» ՍՊԸ-ի գնային առաջարկը (առանց ԱԱՀ) ՀՀ դրամ | «Ռուսկիյե Ավտոբուսի-Գրուպպա ԳԱԶ» ՍՊԸ-ի գնային առաջարկը արտարժույթով և ՀՀ դրամով (առանց ԱԱՀ) (25.11.2015թ ԿԲ կուրս 7 դրամ 34 լումա) |
|---|---|---|---|
| 1. | Ավտոբուս | - | 23.700.000 ռուբլի (173.958.000 - մեկ հարյուր յոթանասուներեք միլիոն ինը հարյուր հիսունութ հազար ՀՀ դրամ) |
| 2. | Ավտոբուս | - | 7.500.000 ռուբլի (55.050.000 - հիսունհինգ միլիոն հիսուն հազար ՀՀ դրամ) |
| 3. | Միկրոավտոբուս | - | - |
| 4. | Միկրոավտոբուս | 19.450.000 (տասնինը միլիոն չորս հարյուր հիսուն հազար) | - |
| 5. | Ավտոմեքենա | - | - |

Հիմք ընդունելով այն, որ «Մեգամոթորս» ՍՊԸ-ի և «Ռուսկիյե Ավտոբուսի-Գրուպպա ԳԱԶ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները բավարարում են հրավերով սահմանված թիվ 1,2 և 4 չափաբաժինների պահանջներին և չեն գերազանցում նախատեսված ֆինանսական հատկացումներից, հանձնաժողովը որոշեց թիվ 1 և 2 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ռուսկիյե Ավտոբուսի-Գրուպպա ԳԱԶ»** ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, իսկ թիվ 4 չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Մեգամոթորս»** ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:**

4. Քանի որ 3, 5 չափաբաժիններով գնային առաջարկներ չեն ներկայացվել, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, նշված չափաբաժիններով ընթացակարգը հայտարարել չկայացած:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:**

5. Հանձնաժողովի քարտուղարին՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«Մեգամոթորս» ՍՊԸ-ի** ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հայտերի գնահատման արդյունքների նպատակով առաջարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ **«Մեգամոթորս»** ՍՊԸ-ին և **«Ռուսկիյե Ավտոբուսի-Գրուպպա ԳԱԶ»** ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:**

6. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկու օրինակ և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ը, ք.Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենք հասցեում:

**Ընդունվեց որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:**

Հանձնաժողովի նախագահ՝ ………………… Մ. Կարապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ ………………… Մ. Համբարձումյան

………………… Ս. Գրիգորյան

………………… Ա. Մկրտչյան

Քարտուղար՝ ………………… Ն.Հակոբյան